

Միջապազային կամավորներ

Կամավորականությունը և փոխադարձ աջակցությունը «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» գաղափարական հիմքում կարևոր տեղ են զբաղեցնում: Տեղական համայնքը, բարեկամները, ընկերները և հարևանները, ինչպես նաև միջազգային կամավորական խմբերը գործում են որպես անմիջական աջակիցներ մեր ընտանիքների համար՝ վերջիններիս հետ միասին կառուցելով պարզ, հարմարավետ ու մատչելի բնակարաններ:



Եկե՛ք Հայաստան 10-14 օրով՝ կառուցելու հայ ընտանիքների հետ միասին և այցելելու Հայաստանի պատմամշակութային հուշարձաններ:

Կիսակառույց փան շինարարության ծախսեր

Մուտքի դուռ	300\$
Ներքին դուռ	110\$
Տան բոլոր ներքին դռները	440\$
Պատուհան	170\$
Տան բոլոր պատուհանները	680\$
Տանիք	2500\$
Սանհանգույց	2000\$
Հատակներ	1100\$
Ներկարարական աշխատանքներ	500\$

Մեկ փան ֆինանսավորման արժեքն է՝

Կիսակառույց՝ 10 500\$

Վերանորոգում՝ 2 900\$

Ձեր ֆինանսական նվիրատվությամբ դուք կարող եք աջակցել տան կարիք ունեցող ընտանիքներին՝ կատարելով առցանց նվիրատվություն մեր կայքի միջոցով՝



Ա.Տիգրանյան փ. 53շ., 26բն., Երևան, 0037, ՀՀ

Հեռ.՝ (374)10 24 23 48

E-mail: fcarmenia@fcharmenia.org

www.fcharmenia.org



*Կասույտնիք
փուն, համայնիք,
հայրենիք*

«Ֆուլեր տնաշինական կենտրոն»

«Ֆուլեր տնաշինական կենտրոնը» Habitat for Humanity կազմակերպության հիմնադիր Միլարդ Ֆուլերի կողմից 2005թ.-ին ստեղծված Fuller Center for Housing կազմակերպության պաշտոնական գործընկերն է Հայաստանում: «Ֆուլեր տնաշինական կենտրոն» հասարակական կազմակերպությունը Հայաստանում գրանցվել է 2008թ.-ի գարնանը:

Տնայկերությունից Հայաստանում

Ըստ «Սոցիալական բարեփոխումները Հայաստանում» գրքի՝ Հայաստանում շուրջ 64000 ընտանիքներ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն, որոնցից ավելի քան 26.000 ընտանիքներ անտուն են: Նրանցից շատերն ապրում են վազոն տնակներում, նկուղներում և այլ ժամանակավոր կացարաններում:



Առաքելություն ու նպատակներ


Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնը» բարեգործական հասարակական կազմակերպություն է, որն աջակցում է ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին կառուցել և վերանորոգել պարզ, հարմարավետ և մատչելի տներ՝ տալով նրանց երկարաժամկետ, անտոկոս փոխառություններ, ինչպես նաև իրականացնում է տնագուրկների շահերի պաշտպանություն՝ դարձնելով այն խղճի հարց և գործելու միում: Ամենամսյա ետվճարները մտնում են շրջանառու ֆոնդ և օգտագործվում այլ ընտանիքների աջակցելու նպատակով՝ այսպիսով դառնալով համայնքային զարգացման կայուն ֆինանսական հիմք:

2017 թ. հաշվետվություն


2017թ. լուծվել է 58 ընտանիքների բնակարանի խնդիրը

2008թ.-2017թ. ընթացքում կառուցվել ու վերանորոգվել է 623 տուն

Եկամտի հիմնական աղբյուրներ



Գործառնական ծախսեր



Գրուդի վարգապետան արդի նախաշտեմներ (ԱՐԴԻ)

ԱՐԴԻ-ն հնգամյա ծրագիր է, որը մեկնարկել է 2013թ.-ի սեպտեմբերին և ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից: Ծրագրի նպատակն է Հայաստանի Սյունիքի, Վայոց Ձորի և Լոռու մարզերի գյուղական համայնքներում խթանել գյուղական զբաղվածությունը՝ տնտեսական զարգացման խոչընդոտները վերացնելու ճանապարհով: Ծրագիրն աջակցություն է տրամադրում գյուղատնտեսության երեք հիմնական ոլորտներում՝ կաթի վերամշակում, մրգերի վերամշակում և գյուղական զբոսաշրջություն: Իրականացնող կազմակերպություններն են Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնը» և Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ Հայկական Մասնաճյուղը:



Համեզգործակիցներ ու դոնորներ

Հայ առաքելական եկեղեցի, USAID, ՎիվաՍել-ՄՏՄ, Կարմիր խաչի միջազգային կոմիտե, Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ, ԱՄՆ դեսպանատուն, ԱՐԴԻ Բարեգործական հիմնադրամ, Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա, Արմենիա Մարիոթ Երևան հյուրանոց, ԶԲԸՄ, Հայ կամավորների միություն, Դեպի Հայք հիմնադրամ, Փրայտուդթերսհաուս Կուպերս Հայաստան, IREX, FLEX, Հայաստան ծառատունկ ծրագիր, տեղական ինքնակառավարման մարմիններ, Երևանի պետական համալսարան, Վարդանանց ասպետներ և դուստրեր, ԱՄՆ խաղաղության կորպուս Հայաստանում, Դիլիջանի միջազգային դպրոց, Դասավանդիր Հայաստան, Մայքրոսոֆթ և այլն: